

ISSN 1829-4707

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
ԵՎ
ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՏԱՐԵԳԻՐՔ

2

ԵՐԵՎԱՆ 2016

**Խ. ԱՐՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ**

ARMENIAN STATE PEDAGOGICAL UNIVERSITY AFTER
KHACHATUR ABOVYAN
FACULTY OF HISTORY AND JURISPRUDENCE

АРМЯНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ ПЕДАГОГИЧЕСКИЙ
УНИВЕРСИТЕТ ИМЕНИ ХАЧАТУРА АБОВЯНА
ФАКУЛЬТЕТ ИСТОРИИ И ПРАВОВЕДЕНИЯ

**ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԵԳԻՐՔ
(ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ)**

HISTORY AND SOCIAL SCIENCES
YEARBOOK
(Collection of scientific articles)

ИСТОРИЯ И ОБЩЕСТВОВЕДЕНИЕ
ЕЖЕГОДНИК
(Сборник научных статей)

2

ԵՐԵՎԱՆ YEREVAN ЕРЕВАН
2016

**Հրատարակվում է Խ. Աբովյանի անվան հայկական
պետական մանկավարժական համալսարանի գիտական խորհրդի,
պատմության և իրավագիտության ֆակուլտետի խորհրդի
որոշմամբ**

Published by decisions of Academic Council of Armenian State
Pedagogical University after Kh. Abovyan and the Council of Faculty of
history and jurisprudence

Опубликовано решениями Научного совета Армянского
государственного педагогического университета имени Х. Абовяна и
совета факультета истории и юриспруденции

Խմբագրական խորհուրդ՝

Միրզախանյան Ռուբեն – Խորհրդի նախագահ (ՀՊՄՀ ռեկտոր,
պ.գ.դ., պրոֆեսոր), Հովհաննիսյան Էդգար - Գլխավոր խմբագիր
(պ.գ.թ., դոցենտ), Պողոսյան Սամվել - Պատասխանատու քարտուղար
(պ.գ.թ., դոցենտ), Սաֆրաստյան Ռուբեն (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
պ.գ.դ., պրոֆեսոր), Մելքոնյան Աշոտ (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պ.գ.դ.,
պրոֆեսոր), Խառատյան Ալբերտ (ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պ.գ.դ.,
պրոֆեսոր), Փիլիպոսյան Աշոտ (պ.գ.դ., պրոֆեսոր), Շիրինյան Լևոն
(ք.գ.դ., պրոֆեսոր), Հովհաննիսյան Վոլոդյա (հ.գ.դ., պրոֆեսոր), Նա-
հապետյան Ռաֆիկ (պ.գ.դ., պրոֆեսոր), Վիրաբյան Ամատունի (պ.գ.դ.,
պրոֆեսոր), Վիրաբյան Վանիկ (պ.գ.դ., պրոֆեսոր), Պողոսյան
Էդուարդ (պ.գ.դ., դոցենտ), Քոսյան Արամ (պ.գ.դ., պրոֆեսոր),
Մինասյան Էդիկ (պ.գ.դ., պրոֆեսոր), Ավետիսյան Հայկ (պ.գ.դ., պրո-
ֆեսոր), Կովաչ Բալինտ (պ.գ.դ., պրոֆեսոր), Հարությունյան Ավետիս
(պ.գ.թ., դոցենտ), Գրեկյան Երվանդ (պ.գ.թ., դոցենտ), Հովհաննիսյան
Հասմիկ (փ.գ.դ., պրոֆեսոր), Քեոյան Գարիկ (ք.գ.դ., պրոֆեսոր), Թո-
փուզյան Արդա (մ.գ.դ., պրոֆեսոր), Գևորգյան Սրբուհի (հ.գ.դ., պրոֆե-
սոր), Վարդանյան Կամո (հ.գ.դ., դոցենտ), Երեմյան Արա (հ.գ.թ.,
դոցենտ), Պապոյան Հարություն (մ.գ.թ., դոցենտ):

Editorial Board:

Mirzakhanyan Rouben - President of Council (Rector of ASPU, Doctor of Historical Sciences, Professor), Hovhannisyan Edgar - Editor (Doctor of History, Associate Professor), Poghosyan Samvel - Executive Secretary (Doctor of History, Associate Professor), Safrastyan Ruben (member of NAS RA, Doctor of Historical Sciences, Professor), Melkonyan Ashot (member of NAS RA, Doctor of Historical Sciences, Professor), Kharatyan Albert (corresponding member of NAS RA, Doctor of Historical Sciences, Professor), Piliposyan Ashot (Doctor of Historical Sciences, Professor), Shirinyan Levon (Doctor of Political Sciences, Professor), Hovhannisyan Vladimir (Doctor of Juridical Sciences, Professor), Rafik Nahapetyan (Doctor of Historical Sciences, Professor), Virabyan Amatuni (Doctor of Historical Sciences, Professor), Virabyan Vanik (Doctor of Historical Sciences, Professor), Poghosyan Eduard (Doctor of Historical Sciences, Associate Professor), Kosyan Aram (Doctor of Historical Sciences, Professor), Edik Minasyan (Doctor of Historical Sciences, Professor), Avetisyan Hayk (Doctor of Historical Sciences, Professor), Kovac Balint (Doctor of History, Professor), Avetis Harutyunyan (Doctor of History, Associate Professor), Grekyan Ervand (Doctor of History, Associate Professor), Hasmik Hovhannisyan (Doctor of Philosophical Sciences, Professor), Keryan Garik (Doctor of Political Sciences, Professor), Topuzyan Aida (Doctor of Pedagogical Sciences, Professor), Kevorkian Srбуhi (Doctor of Psychological Sciences, Professor), Vardanyan Kamo (Doctor of Psychological Sciences, Associate Professor), Yeremyan Ara (Doctor of Law, Associate Professor), Papoyan Harutiun (Doctor of Pedagogy, Associate Professor).

Редакционная коллегия:

Мирзаханян Рубен - Председатель Совета (ректор университета, доктор исторических наук, профессор), Оганнисян Эдгар – главный редактор (кандидат исторических наук, доцент), Погосян Самвел - Исполнительный секретарь (кандидат исторических наук, доцент), Сафрастян Рубен (академик НАН РА, доктор исторических наук, профессор), Мелконян Ашот (академик НАН РА, доктор исторических наук, профессор), Харатян Алберт (член-корреспондент НАН РА, доктор исторических наук, профессор), Пилипосян Ашот (доктор исторических наук, профессор), Левон Ширинян (доктор политических наук, профессор), Оганесян Владимир (доктор юридических наук, профессор), Рафик Нагапетян (доктор исторических наук, профессор), Вирабян Амадуни (доктор исторических наук, профессор), Вирабян Ваник (доктор исторических наук, профессор), Погосян Эдуард (доктор исторических наук, доцент), Косян Арам (доктор исторических наук, профессор), Минасян Эдик (доктор исторических наук, профессор), Аветисян Айк (доктор исторических наук, профессор), Ковач Балинт (доктор исторических наук, профессор), Аветис Арутюнян (кандидат исторических наук, доцент), Грекян Ерванд (кандидат исторических наук, доцент), Оганнисян Асмик (доктор философских наук, профессор), Керян Гарик (доктор политических наук, профессор), Топузян Аида (доктор педагогических наук, профессор), Геворгян Србуи (доктор психологических наук, профессор), Варданян Камо (доктор психологических наук, доцент), Еремян Ара (кандидат юридических наук, доцент), Папоян Арутюн (кандидат педагогических наук, доцент).

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

1. **ՊՈՂՈՍՅԱՆ ՍԱՄՎԵԼ**, ՄԻԱՑՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՆԴԻՐԸ 1917-1918 թթ. 8
2. **ՓԻԼԻՊՈՍՅԱՆ ԱՇՈՏ**, ԶՈՐԱՑ ՔԱՐԵՐ ՀՆԱՎԱՅՐԸ 24
3. **ՍՏԵՓԱՆՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ**, 1921 թ. ՓԵՏՐՎԱՐՅԱՆ ԱՊՍԱՄ-ԲՈՒԹՅԱՆ ԱՆԴՐԱԴԱՐՁԸ Կ. ՊՈԼՍԻ «ՃԱԿԱՏԱՄԱՐՏ» ԹԵՐԹԻ ԷՋԵՐՈՒՄ 44
4. **ՊՈՂՈՍՅԱՆ ԷԴՈՒԱՐԴ**, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆՈՐԱՆԿԱԽ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ՎԵՐԱՇԽՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ 55
5. **ՀԱԿՈԲՅԱՆ ՆԱՐԵԿ**, ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԴԻՎԱՆԻ ԵՎ ՍԻՆՈԴԻ ՖՈՆԴԵՐԻ ՎԱՎԵՐԱԳՐԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏ-ԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (1894-1914 թթ.) 68
6. **ԱՍԱՏՐՅԱՆ ԳԵՂԱՄ**, ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԱԶԳԱՅԻՆ-ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՐԳԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀՈԼՈՎՈՒՅԹՈՒՄ 88
7. **ԺԱՄԿՈՉՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ ԵՊ.**, ՀԱՅՈՑ ՍՈՎՈՐՈՒԹԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԶԱՆԳԵԶՈՒՐՈՒՄ 97
8. **ԲԵԺԱՆՅԱՆ ՄԱՐԻՆԵ**, ԱՅՆԹԱՊԻ 1920-1921 թթ. ՀԵՐՈՍԱՄԱՐՏԸ 111
9. **ԲԱԴԱԼՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ**, ԽԱԼԴԻ ԱՍՏԾՈՒՆ ՄԱՏՈՒՑՎԵԼԻՔ ԿԵՆ-ԴԱՆԱԿԱՆ ԶՈՀԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ 129
10. **ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՀԱԳՆ**, ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԲՈՂՈՔԱԿԱՆ ՄԻՍԻՈՆԵՐՈՒԹՅԱՆ ՔԱՐՈՉՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ (19-ՐԴ ԴԱՐԻ ՎԵՐՋ - 20-ՐԴ ԴԱՐԻ ՍԿԻՉԲ) 142
11. **ՎԱՐԴԱՆՅԱՆ ՆԱՐԻՆԵ**, ԿԱՆՈՆԱԳԻՐՔ ԶԵՆԱԳՐԵՐԻ Բ ԽՄԲԻ՝ XIV ԴԱՐԻՑ ՀԵՏՈ ՄԻՆՉԵԻ XVII ԴԱՐԻ ՎԵՐՋՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՍՐԲԱԳՐՈՒՄՆԵՐՆ ՈՒ ԽՄԲԱԳՐՈՒՄՆԵՐԸ 152
12. **ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՎԵՏԻՍ**, **ԲԱԼՅԱՆ ԱՐՇԱԿ**, ՎԱՆԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ԵՎ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ...165

13. **ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՆԱ**, ԲԻԱՅՆԻԼԻԻ ՊԱՆԹԵՈՆԸ ՀԱՄԱՁԱՅՆ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Գ. ՂԱՓԱՆՑՅԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՐԴԻ ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅԱՆ 182
14. **ՍՈՒՐՈՄԻ ՍԱԲՈԼՁ**, ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՀԱՅԱԼԵՁՈՒ ՀԱՎԱՔԱԾՈՒՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՎՐԱ 197
15. **ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ՌԱՑԻԿ**, ԳԱՅՈՍ ԿՈՌՆԵԼԻՈՍ ՏԱԿԻՏՈՍԻ «ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ԵՐԿԸ՝ ՀԱՅ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՆՏԻԿ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ԵԶԱԿԻ ՍԿԶԲՆԱՂՔՅՈՒՐ 217
16. **ՅՈՒՐԳԵՆ ՏՈՒՔԱԽ**, "ԱՅԺՄ ԿԱՄ ԵՐԲԵՔ". ՀՈՒԼԻՍԻ ՀԻՆԳԻՑ՝ ՀՈՒԼԻՍԻ ՎԵՑ. ԵՐԲ ԿՈՂՄՆԱԿԻ ԿԵՐՊՈՎ ՈՐՈՇՈՒՄ ԿԱՅԱՑԿԵՑ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ 238
17. **ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ**, ՄԱՐԿԻԱՆՈՍ ԿԱՅՍԵՐ (450-457թթ.) ՀՐՈՎԱՐՏԱԿՆԵՐԸ ԵՎ 451 Թ.ԻՑ ՀԵՏՈ ՔԱՂԿԵԴՈՆԻ ԺՈՂՈՎԻՆՐԱ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ 297
18. **ԳԱԼՍՏՅԱՆ ԱՇՈՏ**, XX ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻ ԱՐԵՎԵԼԱՀԱՅ ԳԵՂԱՐՎԵՏՏԱԿԱՆ ՎԱՎԵՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԼԵԶՎԱՈՃԱԿԱՆ ՄԻՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ 312

ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

19. **ՇԻՐԻՆՅԱՆ ԼԵՎՈՆ**, ՍԱՄՈՒԵԼ ՖԻԼԻՊ ՀԱՆԹԻՆԳԹՈՆ. ՔԱՂԱՔԱԳԵՏՆ ՈՒ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԸ 322
20. **ՍԱՐՎԱԶՅԱՆ ԼԻԼԻԹ**, ՇԱՀԱՄԻՐ ՇԱՀԱՄԻՐՅԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ՝ ՈՐՊԵՍ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՔ 335
21. **ՆԱԶԱՐՅԱՆ ՀԱՅԿ**, ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱՌԱԶՄԱՎԱՐԱԳԻՏԱԿԱՆ ՄՏՔԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ 357
22. **ԺԱՄԿՈՉՅԱՆ ԱՆՈՒՇԱԿԱՆ ԵՊ.**, ՍՈՎՈՐՈՒԹԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ 372
23. **ՄԱՆՈՒԿՅԱՆ ՍԱՀԱԿ**, ՏԱՐԻՔԸ ՈՐՊԵՍ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՊԱՐՏԱԴԻՐ ՊԱՅՄԱՆ.....381
24. **ՍԱՐԳՍՅԱՆ ՏԱԹԵՎԻԿ**, ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԷԹԻԿԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՄ ԱՆԴԱՄ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ 397
25. **ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ**, ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎԱՔԱՆԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԸ ՈՒ

	ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 2005 ԹՎԱԿԱՆԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ	407
26.	ՇՈՒՏԿՈ ԴՄԻՏՐԻ, ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐԱ , ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՐՈՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԲԱՆԱԿԻ ՀԱՂԹԱՆԱԿԻ ԳՈՐԾՈՆ.....	425
27.	ՖԵՂԱԿ ԵՎԳԵՆԻ, ԴԵՆԻԿԻՆ ԱՆԱՏՈԼԻ, ՅՈՒԴԻՆ ԻՎԱՆ , ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՆԳՆ ՆԵՐՔԻՆ ԶՈՐՔԵՐԻ ՍՊԱՅԻ ԱՆՀԱՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԳԾԵՐԻՑ	442

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԵԹՈԴԻԿԱ

28.	ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ՀԱԿՈՐ , «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՌԻՍԱՆՈՂՆԵՐԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՄՈԴԵԼ-ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ	454
29.	ՏԵՆԻՏԻԼՈՎ ՍԵՐԳԵՅ , ԲՈՒՀՈՒՄ ԴԱՍԱՎԱՆԴՈՂԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻԴԵԱԼԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ	467
30.	ԵՓՐԻԿՅԱՆ ԱՐՄԻՆԵ , ՊԱՏՄԱԲԱՆ-ՌԻՍՈՒՑՉԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԵԹՈԴՆԵՐՆ ՈՒ ԴՐԱՆՑ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	482

ՄԵՐ ԵՐԱԽՏԱՎՈՐՆԵՐԸ

31.	ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՄՈ – 110	491
32.	ՔՈՍՅԱՆ ԱՐԱՄ – 60	497
33.	ՄԻՆԱՍՅԱՆ ԷԴԻԿ – 60	500

	ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀՈԴՎԱԾԱԳԻՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	505
--	--	-----

24. ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԷԹԻԿԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՄ ԱՆԴԱՄ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ
ՍԱՐԳՍՅԱՆ ՏԱԹԵՎԻԿ

Քանալի բառեր՝ հանրային ծառայության էթիկա, էթիկական որոշումներ, էթիկական դատողություններ, հանրային կառավարման ամբողջականություն:

Վերջին երկու տասնամյակների ընթացքում ԵՄ անդամ երկրները ներդրել են նշանակալից ռեսուրսներ իրենց հանրային ծառայության համակարգերում էթիկական չափանիշների հաստատման նպատակով, ինչի մասին է վկայում էթիկական վարքականոնների լայնամասշտաբ տարածումը: Սակայն առկա է երկար ժամանակային կտրվածքով էթիկական վարքի զարգացումը չափելու գործիքաշարքերի և համապատասխան մեթոդաբանության խնդիր: Այնուամենայնիվ, պատմական համեմատություն կատարելու դեպքում ակնհայտ է, որ եվրոպական երկրների հանրային ծառայողները դարձել են էթիկապես ավելի զգայուն այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են խտրականությունը, նվերների ընդունումը, քաղաքական հովանավորչությունը, թափանցիկությունը և հաշվետվողականությունը: Մյուս կողմից առկա են բազմաթիվ էթիկական չափանիշներ և կանոններ, որոնք շարունակում են ոտնահարվել: Հանրային ծառայության ոլորտից հանրության ակնկալիքները գնալով աճում են, իսկ էթիկական չափանիշները՝ խստանում: Նոր հանրային մենեջմենթը, իր հերթին ևս, առաջ է բերում նոր մարտահրավերներ և սպառնալիքներ, իսկ էթիկական քաղաքականությունները դառնում են ավելի կարևոր: Այս մասին են վկայում հանրային ծառայության ոլորտում կարգավորիչ գործունեության ակտիվությունը, կանոնների և չափանիշների աճող թիվը, էթիկայի նշանակության, իմաստի ըմբռնումը, մեծ քանակությամբ էթիկական վարքականոնների ընդունումը, հաշվետվողականության ավելի բարդ մեխանիզմների ներդրումը, էթիկայի աճող ինստիտուցիոնալիզացիան էթիկական հանձնաժողովների, վերահսկիչ մարմինների, բացահայտման քաղաքականությունների միջոցով, անձնակազմի էթիկական վերապատրաստման հաճախականացումը:

Չափանիշների և կանոնների թվի ավելացման հետ մեկտեղ աճել է այն հիմնախնդիրների թիվը, որոնք ճանաչվում են՝ որպես ոչ

էթիկական վարքի ցուցաբերում: Չնայած, այս միտումը չի կարելի ընդհանրացնել բոլոր ԵՄ անդամ երկրների համար. ավելի մեծ քանակությամբ կարգավորումների և չափանիշների կարիք հիմնականում զգում են Արևելյան Եվրոպայի երկրները: Ավելի շատ էթիկական կանոնները և կարգավորումները դառնում են անհրաժեշտ այնպիսի քաղաքական, տնտեսական, իրավական և ինստիտուցիոնալ համատեքստում, որտեղ ցածր է հանրային վստահությունը: Շատ երկրներում էթիկական քաղաքականությունները նախաձեռնվում և կյանքի են կոչվում հանրային անվստահության աճող մակարդակի պայմաններում (անվստահություն ավելի շատ քաղաքական գործիչների, քան վարչարարների նկատմամբ):

Բոլոր անդամ երկրները պարտավորվել են հաճախականացնել և ուժեղացնել իրենց ջանքերն ու աշխատանքը էթիկայի ոլորտում հանրային վստահության բարձրացման նպատակով: Հանրային վստահության աստիճանը, ինչ խոսք, պայմանավորված է նաև այլ գործոններով: Եվ եթե էթիկայի բարելավման ուղղությամբ աշխատանքները չխստացվեն, դժվար թե ապահովվի հանրային վստահության աստիճանի բարձրացում, սակայն մյուս կողմից էլ այս ուղղությամբ աշխատանքներն անպայմանորեն չէ, որ հանգեցնեն հանրային վստահության բարձրացմանը: Էթիկայի բարելավման գործիքներից ամենակարևորներն են համարվում էթիկական առաջնորդությունը, վարչարարների գործունեության թափանցիկությունը, էթիկական օրենսդրությունը և վերապատրաստումը: Թույլ առաջնորդությունը համարվում է էթիկական քաղաքականությունների արդյունավետության ամենամեծ խոչընդոտներից մեկը, իսկ կազմակերպությունում առկա ֆինանսական ճգնաժամը կարող է էլ ավելի նվազեցնել առաջնորդության նկատմամբ վստահության աստիճանը: Էթիկական քաղաքականությունների իրականացման արդի փորձը վկայում է, որ հետծառայողական գործունեության կարգավորումները ԵՄ անդամ երկրներում էթիկական մեխանիզմներից ամենաքիչ արդյունավետն են: Էթիկական մեխանիզմներից թույլ են համարվում նաև նվերների ընդունման կանոնները, ամբողջականության պատասխանատուների

ինստիտուտը,¹ ֆինանսական շահերի հայտարարագրումը, էթիկական խախտումների մասին տեղյակ պահողների պաշտպանությունը (protection of whistle-blowers) և էթիկական վարքականոնների կիրառման արդյունավետությունը:² Շատ ինստիտուցիոնալ կառուցվածքներ դեռևս թույլ են, և էթիկական քաղաքականությունների իրականացումն ու վերահսկումը շարունակում է լինել ոչ բավարար արդյունավետ: Բացի այդ, անդամ երկրներն ավելի ակտիվ են հակակոռուպցիոն և շահերի հայտարարագրման քաղաքականությունների ինստիտուցիոնալիզացիայի գործընթացում, քան էթիկական այլ քաղաքականությունների դաշտում: Իսկ ինստիտուցիոնալ կառուցվածքները մեծապես տարբերվում են երկրից երկիր: Շահերի բախման և հակակոռուպցիոն քաղաքականությունների մասով տիրապետող միտում է հատուկ մասնագիտացված մարմինների ձևավորումը, որոնց խնդիրն է քննել կոռուպցիոն և շահերի բախման դեպքերը ազգային հանրային ծառայություններում: Տեսականորեն այսպիսի մարմինները պետք է անկախ լինեն: Միայն մի քանի անդամ երկրներ են ձևավորել կենտրոնացված, ինտեգրված կառույցներ էթիկայի ոլորտում՝ BIOS-ը Նիդերլանդներում, KNAB-ը Լատվիայում և Հանրային կյանքի չափանիշների հանձնաժողովը Միացյալ Թագավորությունում:³

Էթիկական քաղաքականությունների արդյունավետ ինստիտուցիոնալիզացիայի մասին առկա են ավելի շատ հարցեր, քան պատասխաններ: Այդպիսի հարցերից կարելի է առանձնացնել. բացահայտման քաղաքականությունների ինչպիսի՞ փորձեր կան (disclosure policies) ղեկավարման և վերահսկողության գործընթացներում, արդյո՞ք անդամ պետությունները երբևէ գնահատել են, թե ինչ արդյունավետություն

¹ Ամբողջականության պատասխանատուների ինստիտուտը հանդիսանում է եվրոպական երկրներում հանրային կառավարման էթիկայի ամրապնդման ինստիտուցիոնալ մեխանիզմներից մեկը (public integrity officers):

² Moilanen T., Salminen A. Comparative Study on the Public-service Ethics of the EU Member States, A report from the Human Resources Working Group, EUPAN, 2006, p. 17. http://vm.fi/documents/10623/307711/Comparative_Study_on_the_Public_Service_Ethics_of_the_EU_Member_States_publication+131206.pdf/524e908b-5388-4d1c-9199-59b4f3e567a9 (08.03.2015)

³ Demmke C., Moilanen T. Effectiveness of Public-Service Ethics and Good Governance in the Central Administration of the EU-27; Evaluating Reform Outcomes in the Context of the Financial Crisis, Frankfurt am Main, Peter Lang, 2012, p. 2.

ունեն էթիկայի ոլորտում առկա ինստիտուցիոնալ կառուցվածքները, արդյո՞ք անհրաժեշտ են որոշակի կոորդինացիոն մարմիններ, արդյո՞ք որոշ խորհրդակցական մարմիններ, ինչպիսին օրինակ BIOS-ը Նիդեռլանդներում, կարող են ծառայել՝ իբրև դերային մոդելներ և ապահովել լավ պրակտիկաների տարածման օրինակ, արդյո՞ք բոլոր էթիկական մարմինները պետք է օժտված լինեն ինստիտուցիոնալ և ֆինանսական անկախությամբ:

ԵՄ անդամ երկրներում մոտ ապագայում դժվար թե ձևավորվի այնպիսի բազմաքանակ էթիկական բյուրոկրատիա, ինչպես օրինակ Միացյալ Նահանգներում կամ Կանադայում: Հանրային ծառայության էթիկական համակարգի կայացման եվրոպական և ամերիկյան չափումների տարբերակման և մեկնաբանման համար առավել նպատակահարմար է էթիկական համակարգի ներդրման և զարգացման օրինաչափությունները դիտարկել «հանրային ծառայության էթիկա» և «կառավարման համակարգի ամբողջականություն» իրար փոխլրացնող, բայց ոչ փոխարինող հասկացությունների լուսաբանման ներքո:⁴ Այս իմաստով եվրոպական ակադեմիական շրջանակներն ավելի հակված են կիրառելու «ամբողջականություն» եզրույթը՝ հասկացության մեջ դնելով և՛ էթիկական առումով ճիշտ գործելու, և՛ ճիշտ մտածելու կարողությունը: Ամողջականություն հասկացությունը տվյալ դեպքում ներառում է նաև հանրային ծառայողի համար անհրաժեշտ արհեստավարժության և պրոֆեսիոնալիզմի տարրեր, մինչդեռ ամերիկյան գիտական շրջանակները և ոլորտի մասնագետ-հետազոտողները, հանրային ծառայողների էթիկական վարք ասելով, գերազանցապես շեշտադրում են էթիկական դատողություններում ներգրավվելու և բարոյական որոշում կայացնելու պետական բյուրոկրատների ունակությունը, իսկ ճիշտ գործելու ունակությունը բնութագրում են պրոֆեսիոնալիզմ հասկացությամբ:

⁴ Kolthoff E., Huberts L., Heuvel H. The ethics of new public management: is integrity at stake?, Public Administration Quarterly, 2006, p. 8.
http://www.publicservices.ac.uk/wp-content/uploads/nig_ethics_integrity.pdf (23.12.2014)

Եթե եվրոպացիների համար կարևորվում են հանրային ծառայության էթիկայի հիմնականում կազմակերպական առանձնահատկությունները, ապա ամերիկյան հանրային ծառայության համակարգում գրեթե հավասար կարևորություն են ստանում էթիկայի թե՛ կազմակերպական, և թե՛ քաղաքական նրբերանգները: Եվրոպական գիտական մտքում ամբողջականությունը հանդես է գալիս՝ որպես ինչ-որ իմաստով պահպանողական եզրույթ, որը պաշտպանում է, ապահովում է մասնագետ-բյուրոկրատների կարիերային առաջխաղացումը և պահպանում է ստատուս-քվոն: Ամբողջականությունը հանդես է գալիս նաև՝ որպես արժեքների ամբողջություն, որոնք ապահովում են կառավարության արդյունավետ գործունեությունը և թույլ են տալիս, ըստ պատշաճի, կիրառել կառավարության օպերացիոնալ գործիքաշարքը: Եվրոպացիները այս առումով ավելի «պահպանողական» մոտեցում են ցուցաբերում՝ հաճախ կիրառելով սոցիալական գիտությունների գործիքաշարքը և հետազոտական մեթոդները ամբողջականության ուսումնասիրման նպատակով: Ինչ վերաբերում է էթիկական որոշումների կայացմանը, ապա ֆրանսիական մասնագիտական աղբյուրներում գերակշռող է այն տեսակետը, որ էթիկապես ճիշտ գործելը իր բուն իմաստով վերաբերում է առաջին հերթին հենց էթիկական որոշման կայացմանը այն պատճառով, որ եթե որոշումն ինքնակնհայտ է և պարզ, ապա դժվար թե առաջանա էթիկական հիմնախնդիր: Իսկ ահա՛, բարդ ընտրությունները ենթադրում են ոչ միայն բարդ իրավիճակներ, այլ նաև էթիկապես ճիշտ գործելու ցանկություն, կողմնորոշվածություն դեպի գործողության հետևանքները և պատրաստակամություն հանրության առջև պատասխանատվություն կրելու թե՛ որոշման կայացման փուլում, թե՛ գործողության ավարտից հետո: Այսպիսի իրավիճակը ներառում է հետևյալ բաղկացուցիչները⁵

1. իրավիճակի բարդության որոշակի աստիճանի առկայություն. հանգամանքները խճճված են և խրթին,
2. ինքնագիտակցություն. անձի կողմից ազնվություն ինքն իր և ցանկալի արդյունքների նկատմամբ, ցանկություն որոշման

⁵ Josephson Institute of Ethics: Making Ethical Decisions, pp. 14-15.
http://www.sjjohnson.com/acad/ethics/making_ethical_decisions.pdf (07.05.2015)

- կայացման փուլում գործել էթիկապես ընդունելի եղանակով թե՛ գիտակցական, և թե՛ մեթոդաբանական առումներով,
3. պատասխանատվություն. ձեռնարկված գործողության արդյունքների համար պատասխանատվություն կրելու պատրաստակամություն,
 4. արդարացում. որոշումները կարող են արդարացվել և հիմնավորվել,
 5. հրապարակայնություն. պատրաստակամություն հանրությանը մեկնաբանելու, թե ինչու է կայացվել այդ որոշումը,
 6. փաստարկվածություն. գործողությունը, որոշումները փաստերով հիմնավորելու կարողություն:

Բարոյական անորոշությունը տարբեր չափով առկա է գրեթե բոլոր հանրային քաղաքականություններում, ներառյալ այն քաղաքականությունները, որոնք արժանացել են պետական այրերի հավանությանը⁶: Ջոն Բեյլին, որպես իր կողմից առաջարկված երեք գիտակցական մոտեցումների հիմնավորում, մեջբերել է Ռեյնոլդ Նեյբուրի խոսքերը. «Մարդու արդարության պահպանման կարողությունը դեմոկրատիան դարձնում է հնարավոր, բայց մարդու հակումը գործելու անարդարություն՝ դեմոկրատիան դարձնում է անհրաժեշտ»:⁷ Հանրային ծառայողի համար մյուս մարտահրավերն է ճանաչել և հասկանալ այն չորս իմաստնությունները, որոնց օգնությամբ հնարավոր է դառնում հասկանալ և վերլուծել հանրային ծառայության համակարգաստեղծ գործոնները: Առաջինն այն է, որ չկա որևէ ճանապարհ խուսափելու մասնավոր շահի առկայությունից որոշումների կայացման գործընթացում: Յանկացած իրավիճակում մարդկային բնույթը թելադրում և ծնում է անձնական-մասնավոր շահեր: Երկրորդը՝ ցանկացած անձ, ով ներգրավված է որոշումների ընդունման գործընթացում, հակված է գործելու՝ որպես ռացիոնալ, բանական էակ: Եվ որքան կրթված և գիտակ է մարդը, այնքան ավելի հավանական են

⁶ Marmor A. The rule of law and its limits, Law and Public Policy Research Paper 03-16, University of Southern California, Law School Los Angeles, 2003, p. 17.
http://weblaw.usc.edu/centers/class/class-workshops/usc-legal-studies-working-papers/documents/03_16_paper.pdf (11.07.2015)

⁷ Brown R. The Essential Reinhold Niebuhr: Selected Essays and Addresses, Yale University Press, 1986, p. 13.

նրա կողմից ռացիոնալ, տրամաբանված գործողությունները: Երրորդը՝ հանրային ծառայությունը պահանջում է ջանքեր հանրային ծառայողների կողմից ձևափոխելու մասնավոր, նեղ շահերը՝ դրանք համապատասխանեցնելով հանրային շահի ընդունված ընկալումներին, սակայն այդ ձևափոխումների եղանակները զգում են շարունակական կատարելագործման կարիք և հեռու են կատարյալ լինելուց:

Հանրային ծառայության իրականացման գործընթացում հանրային և մասնավոր շահերի համապատասխանեցման կարևոր գործիք է երկխոսության կազմակերպումն ու իրականացումը տարբեր կողմերի միջև (քաղաքացիներ, պետական մարմիններ, առանձին հանրային ծառայողներ): Սակայն այդպիսի կառուցողական երկխոսությունների կազմակերպումը ծախսատար, ժամանակատար, մասնագիտական կարողություններ և համապատասխան ունակություններ պահանջող գործընթաց է: Չորրորդը՝ պետք է հաշվի առնել, որ պետական կառավարման ժամանակ երբեք չեն լինում որոշումներ, որոնք բացարձակ ճիշտ կամ բացարձակ սխալ են: Պրակտիկան վկայում է, որ հանրային շահի ապահովման գործընթացում յուրաքանչյուր կողմ ունենալու է զգացողություն, որ ինքը չստացավ այն ամենը, ինչ ուզում էր, կամ չկորցրեց ամեն ինչ: Իսկ ինչ վերաբերում է Բեյլիի կողմից նշված վարչական գործընթացների հակասականությանը, ապա սա նշանակում է, որ նույն վարչական գործընթացները, որոնք անհրաժեշտ են հանրային ծառայողների կողմից իրենց կատարած գործի նկատմամբ անհատական-բարոյական դատողությունների ձևավորման, կարգուկանոնի հաստատման և հավասարության ապահովման համար, երբեմն խոչընդոտում են առաջընթացը և ծագած խնդիրների արագ արձագանքման կարողությունը: Օրինակ, հանրային քաղաքականությունների միջավայրային ազդեցության գնահատումը համարվում է անհրաժեշտ պայման շրջակա միջավայրի պահպանման կողմնակիցների կողմից, իսկ տնտեսվարող սուբյեկտների կողմից՝ շատ հաճախ որպես տնտեսական առաջընթացը խոչընդոտող վարչական սահմանափակում: Բյուրոկրատիայի գործունեությունում վարչական գործընթացների հակասականությունը կարող է դիտվել նաև բյուրոկրատական ինտերցիայի հասկացության սահմաններում. երբ բյուրոկրատիան դիմակայում է ցանկացած նորարարությունների, ցանկանում է պահպանել

ստատուս քվոն, և արդյունքում գործընթացներն ու հաստատված ընթացակարգերը, դառնալով ինքնանպատակ, խոչընդոտում են կազմակերպության ռազմավարական նպատակների իրականացմանը և կազմակերպության զարգացմանը:⁸

Հանրային ծառայողի գործունեության ընթացքում ամենադժվար իրավիճակներից մեկն այն է, երբ հանրային ծառայողը պետք է կայացնի որոշում հաճախ իրար հակասող կամ իրար բացառող արժեքների և վարքի մոդելների միջև: Հաշվի առնելով վերը նշվածը՝ կարելի է եզրակացնել, որ հանրային ծառայողի մասնագիտական որակների շարքում շատ մեծ տեղ է զբաղեցնում բյուրոկրատական իներցիան հաղթահարելու կարողությունը, քանի որ, հանրային ծառայողը, հանդես գալով որպես բյուրոկրատական համակարգի մաս, հաճախ դիմում է իներցիոն գործողությունների մի կողմից սեփական դիրքի, և մյուս կողմից՝ համակարգի առկա վիճակի պահպանման նպատակով: Շատ դեպքերում, այսպես կոչված ոչ-որոշումը կամ անգործությունը ևս հանդիսանում են վարքի որոշակի տեսակներ, որոնք կարող են ունենալ մեծամասշտաբ և ոչ ցանկալի հետևանքներ:

ԵՄ անդամ երկրների ազգային հանրային ծառայության համակարգերում էթիկական քաղաքականությունների ներդրման դժվարությունները պայմանավորված են նաև նրանով, որ անդամ երկրների կողմից դեռևս ամբողջությամբ չի գիտակցվել հիմնախնդրի հնարավոր կորուստները ամբողջ համակարգի համար: Մասնավորապես, անդամ երկրներում բացակայում է էթիկական խախտումների արդյունքում հանրային ծառայության համակարգի կրած ֆինանսական կորուստների գոնե մոտավոր հաշվարկը: Էթիկական հիմնախնդիրների լուծման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները այսօր տարրալուծված են իշխանության տարբեր ճյուղերի միջև: Էթիկական քաղաքականությունների մյուս առանձնահատկությունն այն է, որ անդամ երկրները չեն իրականացնում էթիկական քաղաքականությունների

⁸ Congleton R. A Model of Asymmetric Bureaucratic Inertia and Bias, Public Choice 39, no. 3, 1982, pp. 421-425.

ծախքեր-շահույթներ վերլուծություն:⁹ Էթիկական քաղաքականությունների հետ կապված աճող ծախսերը հիմնականում արդարացվում են այն հիմնավորմամբ, որ դրանց շնորհիվ հնարավոր է լինում խուսափել էթիկական սկանդալներից: Անդամ երկրներում Մարդկային ռեսուրսների կառավարման բարեփոխումները, որոնք ամբողջականության տեսակետից ընդունված է համարել ամենախոցելին, ներառում են կադրային համալրման, ծառայողական առաջխաղացման, պարգևատրման և անձնակազմի շարժունակության քաղաքականությունները:

Ներկայումս տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների արագընթաց զարգացումը դեռևս չի ճանաչվել՝ որպես էթիկական քաղաքականությունների խոցելի մաս, սակայն ապագայում դրանց զարգացումը, հաղորդակցական տարբեր միջոցների լայնամասշտաբ տարածումը անպայմանորեն հանգեցնելու է էթիկական նոր մարտահրավերների: Տեղեկատվական-հաղորդակցական միջոցների զարգացումը նշանակում է, որ անհատ հանրային ծառայողին հասանելի են դառնալու ավելի մեծ քանակությամբ հաղորդակցական ուղիներ: Տեղեկատվական-հաղորդակցական միջոցների օգտագործման վերահսկողությունը և մասնավոր կյանքին միջամտելու հիմնախնդիրները ապագայում ավելի հաճախակի են դառնալու: Իսկ սա նշանակում է, որ հանրային հատվածի կառավարումը դառնալու է ավելի բարդ և մարտահրավերներով լի: Փորձը ցույց է տալիս, որ էթիկայի ոլորտում հիմնականում շեշտադրումը կատարվել է պետական պաշտոնյաների մասնակցությամբ սկանդալներից և պաշտոնական դիրքի չարաշահումից խուսափելու վրա: Կառավարության ամբողջականության այս վերևից-ներքև կարգավորիչ մոտեցումը ապագայում պետք է դուրս գա «վատ հանրային ծառայող»-ի շրջանակներից և ուղեցույց դառնա այն հանրային ծառայողների համար, ովքեր ցանկանում են գործել էթիկայի և ամբողջականության սահմաններում:

⁹ Gagne M., Gavin J., Tully G. Assessing the Costs and Benefits of Ethics: Exploring a Framework, *Business and Society Review* 110, no. 2, Blackwell Publishing, 2005, pp. 181-185.

SUMMARY
**ORGANIZATIONAL CHARACTERISTICS OF PUBLIC SERVICE ETHICS IN EU
MEMBER COUNTRIES**

SARGSYAN TATEVIK

The article describes the ways of public service ethics institutionalization in EU member countries. The main theoretical, organizational, and structural features of ethics policies are presented and analyzed. The concepts of responsibility, transparency, justification and self-consciousness are discussed in ethical decision-making processes among public servants. The focus has been made on the conceptual difference between the concepts of public service ethics and public service integrity.

Keywords: *public service ethics, ethical decisions, ethical judgment, public administration integrity.*

РЕЗЮМЕ
**ОРГАНИЗАЦИОННЫЕ ОСОБЕННОСТИ ЭТИКИ ГОСУДАРСТВЕННОЙ
СЛУЖБЫ В СТРАНАХ ЕС**

САРКИСЯН ТАТЕВИК

В статье описаны способы институционализации этики государственной службы в странах-членах ЕС. Представлены и проанализированы основные теоретические, организационные и структурные особенности политики в области этики. Обсуждаются понятия ответственности, прозрачности, обоснованности и самосознания в процессах принятия этических решений среди государственных служащих. В центре внимания была концептуальная разница между понятиями этики государственной службы и целостности государственной службы.

Ключевые слова: *этика государственного управления, этические решения, этические суждения, целостность государственного управления.*